



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Մեպտեմբեր 2014
Լրատու թիվ 2

Ողջոյնի Խօսք

Յարգելի ընթերցող

Աւարտուեց 2013 - 2014 ուսումնական տարին: Մեր ուսուցչուհիները, աշակերտները, հոգաբարձուները, ծնողական յանձնախումբը, կրթական յանձնախումբը և անհատ ծնողներ հրաշալի աշխատեցին, որի արդիւնքում ունեցանք շատ հետաքրքիր և բեղմնաւոր ուսումնական տարեշրջան:

Ուսուցչական կազմը դասընթացներին զուգահեռ կազմակերպեց կրթական ձեռնարկներ, արժանի է յիշատակել «Թարգմանչաց տօնը», «Նոր տարուայ հանդէսը», «Վարդանանց տօնը», «Մայրերի օրը»: Կրթական յանձնախումբը կազմակերպեց աւարտական դասա-րանի քննութիւնները: Ծնողական յանձնախումբը կազմակերպեց շահութաբեր ձեռնարկներ՝ «Ընդհանուր գիտելիքի մրցութիւն», «Տարեկան դաշտահանդէս», «Նոր տարի», «Սուրբ Զատիկ», ինչպէս նաև ամէն կիրակի դասամիջոցի ընթացքում աշակերտութեանը սպասարկեցին ըմպելիքներ ու պատառներ: Տարեց տարի մենք տեսնում ենք մեր աշակերտների առաջադիմութեան բարձրացումը, որի վառ օրինակն էր Յուլիսի 13-ի վարժարանի ամսվերջի հանդէսը, որը նուիրուած էր հայ տաղանդաւոր գրողներ՝ Պարոյր Սևակին և Դանիէլ Վարուժանին: Վարժարանի արևելահայ և արևմտահայ բաժնի աշակերտները, շնորհիւ իրենց գործին նուիրուած մեր ուսուցչուհիների՝ հրաշալի էին պատրաստուել: Վարժարանի 5 շրջանաւարտներ հրաժեշտ տուեցին իրենց սիրելի կրթօջախին: Շրջանաւարտներն ուրախ էին, որ աւարտում են դպրոցը և որ իրենց կեանքում բացուելու է մի նոր էջ, բայց միևնոյն ժամանակ տխուր էին, որ



Դպրոցի Տնօրէնուհի
Տիկ Ռուզաննա Թաթուլեան

հրաժեշտ են տալիս սիրելի դպրոցին, ուսուցիչներին:

Վերջին անգամ հնչեց դպրոցական զանգը և շրջանաւարտներին ճանապարհեց դէպի նոր կեանք: Բարի երթ Ձե՛զ, սիրելի՛ շրջանաւարտներ: Օգտուելով այս հնարաւորութիւնից մէկ անգամ ևս շնորհակալութիւն եմ յայտնում վարժարանի բոլոր բարերարներին, համագործակիցներին, բարեկամներին, հոգաբարձուներին, ծնողական յանձնախմբի ու կրթական յանձնախմբի անդամներին և ի հարկէ մեր ուսուցչուհիներին:

Շնորհակալութիւն եմ յայտնում նաև այս՝ «Լրատու 2»-ը կազմող ուսուցչուհիներին: Այստեղ Դուք կը տեղեկանաք վարժարանի 2014 - 2015 ուսումնական տարեշրջանի ծրագրերի և ձեռնարկների մասին:

Վստահ եմ, որ յաճոյքով կը կարդաք Եթէ կունենաք որևէ հարց կամ առաջարկ այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու՝ ուղարկէք էլեկտրոնային նամակ՝

E-mail: armenianschool@hotmail.co.uk

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ԱՆԻ

ՎԱՆ

ՎԱՐՍ

Անի «Կարմիր»
697 կէտ

Վան «Կապոյտ»
852 կէտ

Կարս «Նարնջագոյն»
736 կէտ

Այս տարուայ յաղթող
խումբը Վանն է
գերագոյն թիւով
կապոյտ կէտեր
հաւաքած ըլլալով:



Կրթական Ձեռնարկներ

Գեղարուեստական Օր



Տիկ Արաքս Նազարեան
Գեղարուեստական Աշխատանքներու Պատասխանատու



Մայիսի 11-ին դպրոցին ներս տեղի ունեցաւ «Գեղարուեստական Օր»:

Հայաստանի Հանրապետութեան Գիտութեան եւ Կրթութեան Նախարարութեան առաջադրանքով կազմակերպուած էր համահայկական մանկապատանեկան նկարչական 5րդ մրցույթ-փառատոնը՝ այս անգամ «Մէկ դար եւ աւելի» խորագրով, որը նուիրուած էր հայոց ցեղասպանութեան 100 ամեակին:

Այս տարուայ նիւթին նպատակն էր մեր աշակերտներուն խրախուսել որպէսզի խորհին եւ արտայայտուին հայ ժողովուրդին ներկայ դրութեան

մասին: Այս գծագրութիւններէն տասը հատը դրկուած են Հայաստան, եւ ուրախ ենք տեղեկացնելու որ անոնցմէ 3 աշակերտներու աշխատանքները անցած են երկրորդ փուլին եւ պիտի ցուցադրուին Հայաստանի մէջ: Անոնք են՝

Անայիս Տէր Յակոբեան 15 տարեկան, «Յոյս», ջրաներկ եւ գրիչ
Դաւիթ Յարութիւնեան 14 տարեկան
«Յոյս եւ հաւատ», գրիչ եւ մատիտ
Շահում Ավեջան 15 տարեկան,
«Վերածնունդ», գրիչ:

Ապրիլ ք:



ՀԲԸՄ Լոնտոնի մասնաճիւղի Շարադրութեան Մրցույթ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լոնտոնի մասնաճիւղի ձեռնարկութեամբ, Կիրակի մայիսի 4-ին մեր դպրոցին մէջ տեղի ունեցաւ շարադրութեան մրցույթ՝ «Ի՞նչ կը Նշանակէ Հայ Ըլլալ» վերնագրով: Առաջադրանքին մասնակցեցան 5-րդէ 9-րդ դասարաններու աշակերտները եւ ըստ սրբագրող յանձնախմբին տպաւորութիւններուն՝ երիտասարդ հեղինակները մեծ հայրենասիրութիւն եւ խորաթափանց միտքեր դրսեւորեցին իրենց գրութիւններուն մէջ: Մայիսի 18-ին, ՀԲԸՄ-ի Գործադիր Վարչութեան ատենապետի՝ Պր. Ժիրայր Գեորգեանի եւ կազմակերպող Տիկ. Սեդա Նազարեանի ներկայութեամբ, իւրաքանչիւր մասնակից ստացաւ վկայական եւ փոքրիկ յուշանուէր մը: Դասարանի լաւագոյն շարադրութիւն գրողները ստացան դրամական պարգեւ եւ վկայական, անոնք էին՝ Քրիստոֆեր Անդրեասեան, Սիփան Դրօ Պետրոսյան, Սեւան Ճոլոլեան, Շահում Ավեջան, իսկ Վարժարանիս առաջին տեղը գրաւեց 7-րդ

դասարանի աշակերտ Սիփան Դրօ Պետրոսեանը, որուն շարադրութիւնը մօտ ատենէն կրնաք կարդալ Գ. Թահթա դպրոցին կայքէջին վրայ:

www.armenianschool.org.uk

Կը շնորհաւորենք բոլոր մասնակցող աշակերտներուն եւ մեր երախտագիտութիւնը կը յայտնենք սրբագրող յանձնախումբին՝ Տիկնայք Սեդա Նազարեան, Մայտա Գեորգեան, Սիլվա Շամմասեան եւ Ռուզան Գալստեան, ինչպէս նաեւ Լոնտոնի ՀԲԸՄ-ին՝ մէկ անգամ եւս իրենց ծրագրով մեր աշակերտներուն մէջ հայասիրութեան զգացումներ ընդառաջելու համար:



Մարզական Ձեռնարկներ



Մարզական Օր

Այս տարի, 18 Մայիսին ունեցանք միջ-դասարանային ընդհանուր մարզական օր մը որ շատ մեծ խանդավառութիւն ստեղծեց աշակերտներուն, ծնողաց եւ բոլոր ներկաներուն մէջ: Աշակերտները ըստ տարիքի մասնակցեցան տարբեր մրցումներու ինչպէս երեք ոտանի մրցավազք, տոպրակով վազք, պարան ցատկէլ, խոչընդոտներու մրցում եւ հակիթ ու դգալի մրցավազք:

Աշակերտներու մրցավազքերէն ետք, ծնողները եւ ուսուցչուհիները մրցակցութեան մեծ ոգիով մասնակցեցան նման մրցավազքերու:

Այս հաճելի, եռանդուն եւ զուարճանալի օրուան աւարտին, Տնօրէնուհի Տիկ Ռ Թաթուլեան բաժնեց Կարմիր, Կապոյտ եւ Նարնջագոյն խումբերու առաջին, երկրորդ եւ երրորդ դիրք գրաւողներուն՝ վկայագիրներ:



Այս տարի դպրոցի աշակերտութիւնը բաժնուած էր երեք խումբերու Կարմիր, Կապոյտ եւ Նարնջագոյն (Անի, Վան եւ Կարս): Տարուան ընթացքին, աշակերտները կէտեր հաւաքեցին տարբեր չափանիշներու համար, նոյնպէս կէտեր հաւաքեցին մարզական յաղթանակներով: Այս կէտերու գումարը եւ բարձրագոյն թիւով կէտեր հաւաքող յաղթական խումբը պիտի յայտնուէր ամսվերջի հանդէսին:



Ծնողական Ցանձնախումբի Ձեռնարկներ

Դաշտահանդես



*Միրում եմ լինել ինքս
իմ հյուրը...
Ու հյուրասիրվել
համեղ «հուշերով»*

Պարոյր Մեւակ

Դպրոցի տարեկան ամառնային դաշտահանդեսը տեղի ունեցավ 29 Յունիսին մեր դպրոցի դաշտին մեջ: Ըստ սովորականին՝ ծնողական յանձնախումբը պատրաստած էր համեղ խորովածներ եւ աղցան-ներ, կային նաեւ տեսակաւոր անուշեղէններ ու ըմպելիքներ: Ուսուցչուհիները կազմակերպած էին խաղեր, որոնցմէ կոկիկ եկամուտ մը ապահովուեցաւ: «Էրեբունի» պարախումբը իր

պարերով ճոխացուց օրուայ մթնոլորտը:

Մեր մեծ երախտագիտութիւնը կ'ուզենք յայտնել Ծնողական Ցանձնախումբին, որուն քրտնաջան աշխատանքը հսկայական նեցուկ կը հանդիսանայ մեր Վարժարանին գոյութեան: Նմանապէս մեր խորին շնորհակալութիւնները օգնականներուն, ուսուցչուհիներուն, հոգաբարձուներուն եւ բոլոր մասնակցողներուն:



Մարզական Ձեռնարկներ (շարունակուած էջ 3էն)



Տարուան ընթացքին տեղի ունեցան նաեւ ճատրակի եւ Փինկ-Փոնկի մրցաշարքներ: Մրցանակներ ստացան -

Փինկ-փոնկի աւագ խումբէն

1 Դաւիթ Յարութիւնեան

2 Անդրէ Բաբայեան

Ճատրակի աւագ խումբէն

1 Լևոն Մինասեան

2 Արին Մոսկոֆեան

Փինկ-փոնկի կրտսեր խումբէն

1 Անդրէ Կարապէյքեան

2 Ստեֆան Օլդէս

Ճատրակի կրտսեր խումբէն

1 Ստեֆան Օլդէս

2 Ալէքս Օհանեան



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



Պտոյտ մը Լոնտոնի Ջրանցքներով



Ինչպէս վերջին տարիներուն հաճելի ասանդութիւն դարձած է՝ այս տարի եւս, Շաբաթ 28 Յունիսին մեր դպրոցի բարերար եւ հոգաբարձու Պր. Շահէ Կիւլեանը, ասարտական դասարանի աշակերտներուն եւ ուսուցչուհիներուն հրաւիրեց իր նաւով պտոյտ մը կատարելու Greenford-ի ջրանցքներով: Առտուրնէ ի վեր մեր պատանիները արդէն մեծ բերկրանքով հաւաքուած էին դպրոցին բակը՝ ուրկէ ուղեւորուեցանք դէպի նաւահանգիստ: Նաւուն վրայ անոնք վայելեցին տեսարանները, ինչպէս նաեւ երգեցին, լուսանկարեցին եւ Պր Կիւլեանին օգնեցին նաւուն հետ կապուած տարբեր թեթեւ պարտականութիւններով: Այնուհետեւ, Պր

Կիւլեանը բոլորին հրաւիրեց ջրանցքին եզերքը գտնուող գեղեցիկ ճաշարան մը, ուր խանդավառ մթնոլորտի մէջ ճաշեցին եւ (գովացուցիչներով) խմեցին հիւրընկալողին կենացը: Ճաշէն յետոյ տարբեր խաղերով զբաղուելէ ետք, տուն վերադառնալու ժամանակը հասաւ, եւ մեր հայ ծովայինները նաւով վերադարձան նաւահանգիստ, մեծ գոհունակութիւն եւ երախտագիտութիւն յայտնելով այս հրաւերին համար: Նման առիթներ, չնայած կրթական ոլորտին չեն պատկանիր, սակայն էական գործօն են մեր պատանիներուն մէջ ներդասարանային եւ միջդասարանային ընկերային կապեր ստեղծելու եւ ամրապնդելու համար:



Մարզական Օրէն Տեսարաններ





2013 - 2014 Կրթական տարեշրջանի Հունձքը

Ամսվերջի եւ Վկայականաց Բաշխման Հանդես

Կիրակի 13 Յուլիսին տեղի ունեցաւ դպրոցի ամսվերջի ընդհանուր հանդէսը: Գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր նուիրուած Հայ գրականութեան երկու հսկաներուն՝ Դանիէլ Վարուժանի ծննդեան 130 ամեակին եւ Պարոյր Սեւակի ծննդեան 90 ամեակին: Տնօրէնուհի, Տիկ Ռուզաննա Թաթուլեանի բացման եւ բարեգալուստի խօսքէն եւ Հայաստանի օրհներգէն ետք, հանդէսի բացումը կատարեց դպրոցի երգչախումբը խմբավարութեամբ Տիկ Լիդիա Ղազարեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ Թամար Մովսիսեանի: Ապա մանկապարտէզի, նախակրթարանի եւ երկրորդականի աշակերտները հանդէս եկան պարով, արտասանութեամբ եւ ներկայացումով՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով: Խումբ մը աշակերտներ, առաջնորդութեամբ ՀՀ վաստակաւոր դերասանուհի, Տիկ Ժենիա Ներսիսեանի, բարձր որակով եւ ազդեցիկ ձեւով ներկայացուցին Դանիէլ Վարուժանի եւ Պարոյր Սեւակի կենսագրականները եւ մի քանի բանաստեղծութիւնները:

Հուսկ տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն: Բեմ հրաւիրուեցաւ հանգուցեալ Պարգէլ Քասարճեանի դուստրը, Մարգրետ Քասարճեանը որուն ձեռամբ տրուեցան Պարգէլ Քասարճեանի յիշատակին նուիրուած մարգական մրցանակները: Օրդ Քասարճեանը տուաւ Փինկ Փոնկի եւ Ճատրակի աւագ ու կրտսեր խումբերու առաջին եւ երկրորդ կարգի արժանացողներուն շքանշաններ եւ յուշատախտակ մը յանձնեց Վան խումբի ներկայացուցիչներուն: Վան խումբը բարձրագոյն թիւով կապոյտ կէտեր հաւաքած էր այս տարի: Ապա տնօրէնուհին հրաւիրեց դպրոցի հոգաբարձութեան ատենապետուհի Տիկ Հերմինէ Զերչեանի, Կրթական Յանձնախումբի ատենապետուհի՝ Տիկ Սիլվա Շամմասեանի եւ Հայր Սուրբ Գարեգին Համբարձումեանի որ կը ներկայացնէր Վահան Սրբազանը, որպէսզի միասնաբար կատարեն վկայականներու եւ կրթական մրցանակներու պարգևատրումը: «Անահիտ Ղազարեան» մրցանակի բաժակը ստացաւ Շահում Ավեջանը, «Պարգէլ Քասարճեան»- Սիւ խնամակալութեան մրցանակները ստացան աւարտական դասարանի աշակերտներ՝ Սեւանա Բաբայեանը, Լեւոն Մինասեանը և Շահում Ավեջանը:

*Ի՛նչ փոյթ կեանքը մեռնող,
երբոր երազը կ'ապրի՝
երբոր երազն անմահ է:*



Դանիէլ Վարուժան



Բեմադրարարութեան
Պատասխանատու՝
Տիկ Արաքս Ղազարեան

Շարունակություն ...



Այս տարի Հայ Տան խնամակալությունը գնահատելով վարժարանին կատարած ազգագուտ աշխատանքները, նուիրած է Լեւոն Սուրմէլեանի անգլերէն լեզուով գրուած «Մասունցի Քաջերը» գիրքը, որպէսզի նուիրուին աւարտական դասարանի աշակերտներուն, որոնք լաւ աշխատանք տարած են տարուան ընթացքին: Այդ գրքերը նուիրուեցան Նարեկ Բաբայեանին և Դաւիթ Տերտէրեանին: Հանդէսը աւարտեցաւ Հայր Սուրբ Գարեգին Համբարձումեանի մատուցած օրհնութեամբ ու ուղերձով եւ Տիկ Ռ Թաթուլեանի փակման ու շնորհակալութեան խօսքով: Վկայական ստացան՝ Ավեջան Շահում, Բաբայեան Սեւանա, Բաբայեան Նարեկ, Մինասեան Լեւոն եւ Տերտէրյան Դավիթ: Շնորհաւորութիւններ մեր սիրելի աշակերտներուն եւ իրենց ընտանիքներուն:

Հանդէսին ներկայ պատուոյ հիրերն էին՝

Հայր Սուրբ Գարեգին Համբարձումեան՝ Վահան Սրբազանի փոխարէն	ՀՀ Դեսպանութիւն
Տէր Շ Բաղդասարեան	Բրիտանահայ Համայնքային Խորհուրդ
Պրն Հայկ Խեմէան	Վարժարանի նախկին տնօրէն
Տէր և Տիկ Ա Փալամուտեան	ՀԲԸՄ Լոնտոնի մասնաճիւղի Ատենապետ
Դկտ Օնիկ և Տիկ Ռ Աւագեան	Քասարճեան խնամակալութիւն
Տէր և Տիկ Ժ Գեորգեան	Համահայկական Հիմնադրամ
Օր Մարգրետ Քասարճեան	Հայ Հիմնարկ և նախկին հոգաբարձու
Տիկ Ա Կարապետի	ՀՕՄ
Դկտ Գ Ստեփան Սարգիսեան	Հայաշէն
Տիկ Ա Բաբայեան	Շաբաթօրեայ դպրոց
Տէր և Տիկ Մ Օհանեան	Վարժարանի Խնամակալութիւն
Տէր և Տիկ Հ Ղազարեան	Բարերար
Տէր և Տիկ Զ Գասպարեան	
Տիկ Մ Ծովիկեան	



Մուտ կա,որ ճիշտ արժէ

Վախ կա,որ մահ արժէ

Ու,վերջապէս,

քայլ կա,որ հենց թոյլը արժէ





2014-2015 Տարեշրջան

Առաջին եռամսեակ 07 Սեպտ. 2014 – 14 Դեկտ. 2014	
7 Սեպտեմբեր	Վերամուտ
19 Հոկտեմբեր	Մշակույթի Օր
26 Հոկտեմբեր	Արձակուրդ
23 Նոյեմբեր	Ծնողական Ընդհանուր Ժողով
14 Դեկտեմբեր	Նոր Տարուայ Հանդես
Երկրորդ եռամսեակ 11 Յունուար 2015 – 22 Մարտ 2015	
7 Փետրուար	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում
15 Փետրուար	Վարդանանց Տոն
22 Փետրուար	Արձակուրդ
15 Մարտ	Մայրերու Օր
22 Մարտ	Զատկուայ Հանդես
Երրորդ եռամսեակ 12 Ապրիլ 2015 – 5 Յուլիս 2015	
18 Ապրիլ	Ցեղասպանության 100 Ամեակ
03 Մայիս	Գեղարուեստական Օր
17 Մայիս	Մարզական Օր
24 Մայիս	Արձակուրդ
21 Յունիս	Դաշտահանդես
05 Յուլիս	Ամավերջի Հանդես

Our News in Brief

- On May 4th 2014, The AGBU London Branch had organised an essay writing competition on the subject of “The Meaning of Being Armenian”. Pupils from Y5 – Y9 took part and the overall winner was Sipan Dro Petrosyan.
- On May 11th 2014, the pupils participated in a Painting Competition. The topic was “1 Century and Beyond” which was dedicated to commemorate the 100th anniversary of the Armenian Genocide.
- We had a very exciting and competitive Sports’ Day on Sunday May 18th. Pupils, parents and teachers alike took part in many different races.
- The graduating class was treated to a scenic boat trip and a pub lunch courtesy of our school’s governor and benefactor, Mr. Shahe Gulian.
- On Sunday July 13, 2014, the End of Year Performance and Graduation Ceremony took place in presence of several guests of honour and the Very Revd Fr. Garegin Hambardzumyan who extended the blessings and message of His Grace Bishop Vahan. Our five graduates were Shahum Avejan, Sevana Babayan, Narek Babayan, Levon Minassian and David Terteryan. The “Anahid Kazarian Prize” was awarded to Shahum Avejan. Congratulations to all.

Խմբագիրներ՝ Տիկ Մարիանա Հալաճ-Ասմինեան, Տիկ Լենա Գիլիսանճեան, Տիկ Սոնա Գալէնտերեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Էջադրում՝ Տիկ Լենա Գիլիսանճեան